Մրցույթ՝ ՀՀ Լոռու մարզի «Ալավերդի համայնքի «Արևներ » մսուր-մանկապարտեզ» ՀՈԱԿ-ի դաստիարակի/0,56 հաստիքային միավոր/ և ֆիզիկական կուլտուրայի հրահանգչի /1 հաստիքային միավոր/ թափուր պաշտոնների համար

ՀՀ Լոռու մարզի «Ալավերդի համայնքի «Արևներ » մսուր-մանկապարտեզ» համայնքային ոչ առևտրային կազմակերպությունը հայտարարում է մրցույթ՝ ֆիզիկական կուլտուրայի հրահանգիչի/1հ.մ/ և Ծաթեր բնակավայրի այլընտրանքային խմբի դաստիարակի /0,56հ.մ./ թափուր պաշտոնների համար:

Դաստիարակի թափուր պաշտոնի համար մրցույթին կարող է մասնակցել այն անձը, ով ունի միջին կամ բարձրագույն մասնագիտական կրթություն՝ համապատասխան որակավորմամբ կամ միջին կամ բարձրագույն մանկավարժական կրթություն և վերջին տասը տարվա ընթացքում նախադպրոցական կրթության ոլորտում առնվազն երեք տարվա մանկավարժական գործունեության ստաժ կամ ունենա միջին կամ բարձրագույն մանկավարժական կրթություն և հատուկ դասընթացի միջոցով (այսուհետ՝ մոդուլ) ձեռք բերի նախադպրոցական մանկավարժության, հոգեբանության և ուսումնամեթոդական հմտություններ ապահովող առնվազն 20 կրեդիտ:

Ֆիզիկական կուլտուրայի հրահանգիչի թափուր պաշտոնի համար մրցույթին կարող է մասնակցել այն անձը, ով ունի միջին կամ բարձրագույն մասնագիտական կրթություն՝ համապատասխան որակավորմամբ կամ միջին կամ բարձրագույն կրթություն՝ նախադպրոցական ուսումնական հաստատության դաստիարակի որակավորմամբ և վերջին տասը տարվա ընթացքում ֆիզիկական կուլտուրայի հրահանգչի առնվազն երեք տարվա ստաժ:

Մրցույթի համար անհրաժեշտ է ներկայացնել հետևյալ փաստաթղթերը՝

1) դիմում (Ձև 1),
2) կրթության մասին փաստաթուղթ (դիպլոմ),
3) անձը հաստատող փաստաթուղթ,
4) աշխատանքային ստաժի վերաբերյալ տեղեկանք կամ աշխատանքային գրքույկ (առկայության դեպքում),
5) ինքնակենսագրություն (Ձև 4),
6) մեկ լուսանկար՝ 3x4 չափի,
7) այլ պետությունների քաղաքացիները՝ Հայաստանի Հանրապետությունում աշխատելու իրավունքը հավաստող փաստաթուղթ,
Հայաստանի Հանրապետության արական սեռի քաղաքացիները ներկայացնում են նաև զինվորական գրքույկ կամ զինվորական կցագրման վկայական,
9) հրատարակված հոդվածների ցանկ կամ գիտական կոչումը հավաստող փաստաթղթեր (դրանց առկայության դեպքում):

Մրցույթն անց է կացվելու 2026 թվականի սեպտեմբերի 2-ին, ժամը 14:00-ին, Ալավերդի համայնքի Օձուն գյուղի 6-րդ փողոց, 2-րդ նրբ, շ 1 հասցեում:

Փաստաթղթերը պետք է ներկայացնել անձամբ՝ անձը հաստատող փաստաթղթով:

Փաստաթղթերն ընդունվում են 2026 թվականի օգոստոսի 3-ից մինչև օգոստոսի 28-ը ներառյալ, ամեն օր ժամը 09:00-17:00-ն, բացի շաբաթ և կիրակի օրերից:

Մրցույթին մասնակցել ցանկացող քաղաքացիները կարող են հայտարարությանը հետևել «Լոռու մարզ» թերթում, www.alaverdi.am, www.lori.mtad.am կայքերում:

Մրցույթն անց է կացվելու երկու փուլով՝ գրավոր և բանավոր:

Հարցաշարին ծանոթանալու համար կարող եք անցնել հետևյալ հղումով՝ https://escs.am/files/files/2024-10-23/cabaf0475d7f79ebda1d3b036d05e5d0.pdf :

Տեղեկությունների համար կարող եք զանգահարել +374 96449932հեռախոսահամարով:

Հասցե՝ Ալավերդի համայնքի Օձուն գյուղի 6-րդ փողոց,2-րդ նրբ,շ 1

Հեռ.՝ +374 96449932, +374 77816780

Էլ. փոստ՝ terezadavtyan55@gmail.com